ՀՏԴ 323.1
Քաղաքագիտություն

Հրայր ՓԱՇԱՅԱՆ
ԱրՊՀ, Պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար, ք.գ.թ.
E-mail: hrayr.pashayan@mail.ru

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾԱՎԱԼԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

Հոդվածում Ղարաբաղյան հակամարտության համատեքստում քննարկվում են տարածքների փոխանակմամբ հիմնախնդրի լուծման գաղափարի ծագումն ու շարժընթացը: Ցույց է տրվում, որ այն ծագել է թուրքական ծավալապաշտական ծրագրերի իրականացման գործընթացում:
ԽՍՀՄ լուծարումից հետո Թուրքիայի կողմից Ադրբեջանի Հանրապետությանը ցուցաբերվող բազմակողմանի աջակցությունը, հայ-թուրքական հարաբերությունները Ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորելը, Հայաստանը շրջափակելու և հայ ժողովրդի դեմ ուղղված այլ թշնամական քայլերը վկայում են, որ դրանք չեն կորցրել իրենց արդիականությունը: Հետևաբար հարկ է մշտապես հաշվի առնել այս հանգամանքը և քայլեր ձեռնարկել այդօրինակ գաղափարների իրականացումը ի սպառ բացառելու համար:
Բանալի բառեր՝ *Ղարաբաղյան հակամարտություն, տարածքների փոխանակում, «Մեղրու միջանցք», թուրքական ծավալապաշ-տություն, Թուրքիա, Ադրբեջան, Հայաստան, Արցախ:*

Г. Пашаян

ТУРЕЦКИЙ ЭКСПАНСИОНИЗМ И ПРОИСХОЖДЕНИЕ ИДЕЙ ОБМЕНА ТЕРРИТОРИЯМИ В СВЕТЕ КАРАБАХСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ

В статье, в контексте Карабахского противостояния автор анализирует возникновение и продвижение идеи урегулирования проблемы обменом территорий. Указывается, что оно возникло в процессе реализации турецких экспансионистских программ.
После распада СССР, Турция оказывает многостороннюю поддержку Азербайджанской Республике, обусловливает армяно-турецкие отношения Карабахским противостоянием, изолирует

Армению от региональных проектов. Эти недружественные шаги, направленные против армянского народа, свидетельствуют о том, что экспонсионистские планы не потеряли своей актуальности. Следовательно, эти обстоятельства необходимоо всегда учитывать и предпринимать шаги для того, чтобы исключить осуществление подобных идей.

Ключевые слова: *Карабахское противостояние, обмен территорий, «Корридор Мегри», турецкий экспансионизм, Азербайджан, Армения, Арцах.*

H. Pashayan

TURKISH EXPANSIONISM AND THE ORIGIN OF IDEAS FOR EXCHANGE OF TERRITORIES IN THE LIGHT OF KARABAKH SETTLEMENTS

The article, in the context of the Karabakh conflict, discusses the emergence and promotion of the idea of resolving the problem of territorial exchange. It is indicated that it arose in the process of implementing Turkish expansionist programs.

After the collapse of the USSR, the multilateral support provided by Turkey to the Republic of Azerbaijan, the conditioning of the Armenian-Turkish relations by the Karabakh conflict, the isolation of Armenia and other enemy moves directed against the Armenian people, indicate that they have not lost their relevance. Therefore, one must always take this circumstance into account and take steps to completely exclude the implementation of such ideas.

Keywords: *Karabakh confrontation, territorial exchange, "Corridor Meghri", Turkish expansionism, Azerbaijan, Armenia, Artsakh.*

Խնդիրը: Փորձագետներից ոմանք այն կարծիքին են, թե Ղարաբաղյան կարգավորմանն ուղղված «Քի Վեսթյան», դրան նախորդած «Փարիզյան» և ընդհանրապես տարածքների փոխանակման սկզբունքներն ու տարբերակներն անցել են պատմության գիրկը, հետևաբար այլևս արդիական ու հրատապ չեն դրանց հետ կապված հարցադրումները: Սակայն քիչ չեն նաև հակառակ տեսակետի կողմնակիցները, ովքեր իրավամբ կարծում են, որ կարգավորման գործընթացի որևէ ժամանակահատված չի կարող կորցնել իր հրատապությունը, քանի դեռ հակամարտությունը վերջնականապես կարգավորված չէ: ՌԴ արտգործնախարարի հակամարտությունը փուլային ճանապարհով կարգավորելու ապրիլի 21-ին արված հակահայկական հայտարարությունը այդ մասին վկայող հավելյալ փաստարկ է[1]: Ոմանք նույնիսկ նշված փաստաթղթի առայսօր չհրապարակելը հակված են կապելու երկու

---

* *Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:*

[1] *Տե՛ս Лавров: активно обсуждается поэтапный подход к карабахскому урегулированию, https://newsarmenia.am/news/nagorno_karabakh/lavrov-aktivno-obsuzhdaetsya-poetapnyy-podkhod-k-karabakhskomu-uregulirovaniya/*

հանգամանքի հետ. «կամ փաստաթուղթը նախատեսում է ոչ համարժեք զիջումներ, կամ այն դեռ կարող է դրվել բանակցությունների սեղանին»[1]:

Խնդիրն ամենևին էլ ցանկությունների կամ նախապատվությունների շրջանակներում չէ, այլ առավելապես օբյեկտիվ իրականության, որն ունի ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական ու աշխարհաքաղաքական չափումներ: Դրանց վերաբերյալ կարծիքները ոչ միայն արդիական են, այլև հակասական ու երբեմն չպարզաբանված լինելու պատճառով խիստ վտանգավոր: Իսկ աշխարհաքաղաքական գործոնները, որոնք եղել և մնում են հիմնախնդրի ծագման ու շարժընթացի գլխավոր ուղեկիցները, անմիջականորեն ընկած են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման այս կամ այն տարբերակի իրացման հիմքում:

Զուտ մեթոդաբանական տեսանկյունից նույնպես վերոնշյալին անդրադարձն ու տարածքային փոխանակումներին առնչվող գործընթացի էության բացահայտումն անհրաժեշտ է կարգավորման տրամաբանությունն իր ամբողջության և համահայկական հարթության մեջ ընկալելու համար: Չէ որ Ղարաբաղյան հակամարտությունն ավելի քան հարյուրամյա պատմություն ունի, իսկ ժամանակաշրջանի յուրաքանչյուր դրվագ ամբողջի մասն է կազմում, առանց որի այդ շղթան ամբողջական պատկերացնել հնարավոր չէ[2]:

Թուրքիան, «Մեղրու միջանցքի» և տարածքների փոխանակման գաղափարը պատմության ու արդիականության հոլովույթում: Ընդհանրապես «Մեղրու միջանցքի» փոխանակման գաղափարը իր ծագումնաբանությամբ թուրքական ռազմավարական ծրագիր է: Սա անհրաժեշտ է մշտապես հիշել: Առաջին անգամ այն բարձրացվել է 1918թ. Արամ Մանուկյան-Խալիլ փաշա բանակցությունների ընթացքում: Վերջինս Արամ Մանուկյանի՝ Հայաստանի սահմանների ընդարձակման և ապրելու հնարավորության ընձեռմանն ի պատասխան առաջարկում էր հայերին ազատել Զանգեզուրի Մեղրի գավառը, որպեսզի իրենք անմիջապես կապվեն Բաքվի հետ: Դրա փոխարեն պատրաստ էր, ի հաշիվ Ադրբեջանի, ընդարձակել Հայաստանի սահմանները դեպի Ջիվանշիր և Վարանդա[3]: Բնականաբար, թուրքական կողմը մերժում ստացավ, քանի որ համաձայնվել կնշանակեր Հայաստանը ռազմավարական իմաստով վերջնականապես կործանել:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ժամանակ, թուրքական կողմն ամեն ինչ արեց այդ ծրագրերը գործնականում իրականացնելու համար: Այսպես՝ 1920թ. նոյեմբերի 8-ին Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնակատար Մուխտար փաշան արևելյան

---

[1] ***Կարապետյան Մ.***, *Քիուեսթյան սրբագրումներ, https://168.am/2016/09/09/685975.html*

[2] ***Մանասյան Ա.,*** *Ադրբեջան-Արցախ հարյուրամյա հակամարտության փոխակերպումները իրադարձային հենքի և իրավաքաղաքական արդյունքների դիտակետից, http://ditaket.info/*

[3] *Տե՛ս* ***Ռուբեն,*** *Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, հ. է, էջ 145:*

ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրին հրահանգեց. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևաբար անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն վերացնել: ... Պետք է վերջնականապես ոչնչացնել հայկական բանակը, զենքերը հայերից առգրավել և բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջապես կապ հաստատել ադրբեջանական թուրքերի և նրանց կառավարության հետ[1]: Արդյունքում՝ Ալեքսանդրապոլի պայմանագրով, որը հետագայում հիմք հանդիսացավ Խորհրդային Հայաստանի սամանների համար, Թուրքիայի կազմի մեջ ներառվեց երբևէ նրա տիրապետության տակ չգտնված Արևելյան Հայաստանի տարածքների մի մասը (Կարս, Իգդիր, Սուրմալու և այլ հայկական տարածքներ), այդ թվում՝ Արաքս գետի ողջ աջափնյա հատվածը մինչև Իրանի հետ սահմանը[2]: Քարտեզի վրա բավականին ակնառու երևում է, թե ինչպես է թուրքական կողմն ամեն ինչ արել բոլոր հայկական հողերը նվաճելու և Ադրբեջանի հետ ընդհանուր ցամաքային սահման ունենալու համար[3]: Այնուհետև, չկարողանալով ուղղակի տիրապետություն հաստատել Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ընկած հայկական մյուս տարածքների վրա, քայլեր ձեռնարկեց դրանք սեփական նախաձեռնությամբ ու ջանքերով հիմնադրված եղբայրական Ադրբեջանի տիրապետությանը հանձնելու համար[4]: Հենց դրանով պետք է առաջին հերթին բացատրել Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների այդ շրջանում դրսևորած հակասական ու հակահայկական վարքը: Մասանավորապես խոսքը վերաբերում է 1920թ. նոյեմբերի 30-ի հեռագրին, որով **Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչել է որպես Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մաս[5],** իսկ շատ չանցած համառ պայքար ծավալել այդ տարածքները Ադրբեջանի տիրապետությանը ենթարկեցնելու համար[6]: Պետք է նկատել, որ հենց թուրքական դիվանագիտության շնորհիվ այս կամ այն կարգավիճակով Նախիջևանն ու

---

[1] ՀԱԱ ֆ. 113, ց. 3, գ. 31, թ.6:

[2] Տե՛ս՝Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր. 2000, էջ 391-394:

[3] Օրինակ տե՛ս «Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» քարտեզը:

[4] Տե՛ս Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագիրը, Документы внешней политики СССР, т. 3, стр. 597-604.

[5] Տե՛ս 1920թ. նոյեմբերի 30-ի Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի հեռագիրը Խորհրդային Հայաստանի հեղկոմին, «Կոմունիստ» (Երևան, հայերեն), 7 դեկտեմբերի 1920թ.:

*[6] Այդ մասին մանրամասն տես՝ **Փաշայան Հ.,** Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում: Մաս առաջին, Ստեփանակերտ, 2016թ., էջ 48-57:*

Լեռնային Ղարաբաղը հայտնվեցին Խորհրդային Ադրբեջանի տրապետության տակ[1]: Ավելին՝ իր հեռահար ծրագրերի իրականացման համատեքստում թուրքական կողմը քայլեր ձեռնարկեց նաև նախկին Երևանի նահանգի և Շարուր-Դարալյագազի գավառը արդեն Ադրբեջանի խնամակալությանը տրված Նախիջևանի վարչական սահմաններում ընդգրկելու համար, քանի որ առանց դրա ի սկզբանե անհնարին կդառնար Թուրքիայի և Նախիջևանի միջև ցամաքային կապն ու հետագա պանթուրքական ծրագրերն առհասարակ: Դա է պատճառը, որ թուրքական կողմի պնդմամբ Կարսի պայմանագրում հատուկ հստակեցվել է Նախիջևանի տարածքը[2]:

Ինչ վերաբերում է Զանգեզուրին, ապա ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ միայն Գարեգին Նժդեհի՝ բոլշևիկյան և թուրքական կանոնավոր բանակների[3], թուրք-թաթարական զինված հրոսակախմբերի, և նույնիսկ խորհրդային Հայաստանի իշխանությունների դեմ անզիջում ու անհավասար պայքարի, ռազմական ու քաղաքական տաղանդի, ցուցաբերած ճիշտ հաշվարկների արդյունքում հնարավոր եղավ պահպանել Հայաստանի Հանրապետության սահմաններում[4]: Դրանով փաստորեն խափանվեց «հայկական սեպի» վերացման և դեպի Միջին Ասիա թյուրքական պետությունների հետ ցամաքային կապ հաստատելու Թուրքիայի համաթուրքական ծրագրերը, քանի որ իր նեղ շերտով հանդերձ Մեղրու շրջանը բաժանում էր երկու թուրքական պետություններին:

Թուրքական ծավալապաշտական ծրագրերի իրականացման հեթական քայլերից մեկը կապված է 1920-1930-ական թթ. Թուրքիայի ու Նախիջևանի միջև ցամաքային կապի հաստատման հետ: Խոսքը վերաբերում է Իրանի ու Թուրքիայի միջև կատարված տարածքային փոխանակումներին, որով վերջինս մի քանի անգամ մեծ, ոչնչով աչքի չընկնող հողատարածքներ զիջեց Իրանին Ուրմիա լճի արեւելյան հատվածում՝ Նախիջևանի հետ 12 կմ. երկարությամբ ընդհանուր սահման ձեռք բերելով, որոնց մեջ ընդգրկվում էին ռազմավարական կարևոր նշանակությամբ Փոքր Մասիսի ստորոտը և Արաքսի առափնյա շրջանից մի հատված: Այնուհետև 1932 թ. հունվարի 23-

---

[1] *Moments in U.S. Diplomatic History, Stalin's Legacy: The Nagorno-Karabakh Conflict, https://adst.org/2013/08/stalins-legacy-the-nagorno-karabakh-conflict/*

[2] *Տե՛ս 1921թ. հոկտեմբերի 13-ի՝ Հայկական ՍՍՀ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի ու Վրացական ՍՍՀ-ի միջև մի կողմից և Թուրքիայի միջև՝ մյուս կողմից, ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ Կարսում կնքված Բարեկամության պայմանագիրը, Документы внешней политики СССР, т. 4, стр. 420-429.*

[3] *Օրինակ 1920թ.ապրիլի 9-ին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը Բաքվից Երևան էր հաղորդում. որ Արցախում կենտրոնացած ադրբեջանական զորամասերը՝ Խալիլ փաշայի և գեներալ Հ. Սելիմովի գլխավորությամբ շարժվել են դեպի Զանգեզուր: Տես՝ ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 606, թ. 6:*

[4] *Օրինակ այս մասին տե՛ս **Միմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920, Եր. 2017, 742 էջ:*

ին Թեհրանում ստորագրվեց Իրան-Թուրքիա պայմանագիրը՝ երկու երկրների սահմանագծերի փոփոխության վերաբերյալ, որը գաղտնազերծված չէ և գործում է առ այսօր[1]: Ճիշտ է, ժամանակին Թուրքիան իր այդ քայլը հիմնավորեց քրդերի ապստամբության ճնշման և երկու երկրների սահմանների անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ, սակայն ակնհայտ է, որ, ինչպես ասում են, թուրքական կողմին հաջողվեց մեկ գնդակով երկու նապաստակ խփել և ի պատիվ թուրքական դիվանագիտության՝ չպարծենալ դրանով:

Իրանագետ Վարդան Ոսկանյանի կարծիքով նույնպես՝ տեղի է ունեցել տարածքի անհամաչափ փոխանակում. Իրանի պետությունը Թուրքիայից ստացել է երեք անգամ ավելի մեծ տարածք Կոտուրի լեռներում՝ հատկացնելով այս փոքր կտորը, որի միջոցով ռազմավարական առումով փաստացիորեն Թուրքիան ցամաքային կապ է հաստատել Նախիջևանի հետ: «Իրանցիները ժամանակին, ի դեմս Իրանի շահի, չեն գիտակցել, թե ինչ բացթողումներ են կատարվում՝ ներքին քաղաքականությունից մինչև սահմանի խնդիրներ, և հետո միայն շատ վերլուծաբաններ դա որակել են՝ որպես պատմական սխալ: Թուրքիայի դիրքերն ուժեղացել են տարածաշրջանում, Իրանի դիրքերը թուլացել են: Իրանում այս հարցի մասին երկու կարծիք չկա. որևէ մեկը չի արդարացնում այդ տարածքային փոխանակումը»[2]:

ԽՍՀՄ կազմավորման և Խորհդային միության հզորացման պայմաններում, բնականաբար, թուրքական կողմի համար «հայկական սեպի» վերացմամբ պանթյուրքական ծրագրերի իրականացումը առժամանակ հետին պլան են մղվել, բայց երբեք դուրս չեն բերվել թուրքական ծավալապաշտության՝ ռազմավարական ծրագրերի համատեքստից: Դրա մասին է վկայում այն փաստը, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին հայության ցեղասպանությունն իրականացրած Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ կենտրոնացրել էր 26 սպառազեն դիվիզիա, և հարմար պահի էր սպասում մեր երկիր ներխուժելու համար[3]:

Թուրքիան և տարածքների փոխանակման խնդրի արծարծումը հետխորհրդային տարիներին:

Անդրադառնալով մեր օրերում տարածքային փոխանակումների միջոցով Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, տեղեկություններ կան, համաձայն որոնց դեռևս 1988թ. մի խումբ իրավապաշտպաններ Անդրեյ

---

[1] ***Բեգիջանյան Է.***, *«1932 թ. Իրան-Թուրքիա պայմանագրի գաղտնազերծումը հակասում է ԻԻՀ շահերին», «Շրջադարձ» հանդես, թիվ 1, ապրիլ, 2004թ.:*

[2] *Նախիջևան. Չհետազոտված փոփոխություններ, վտանգներ և առավելություններ https://hraparak.am/post/5b5837535acf3506c8eb77fd?posts/5b5837535acf3506c8eb77fd/նախիջևան-չհետազոտված-փոփոխություններ-վտանգներ-և-առավելություններ*

[3] *Տե՛ս* ***Штеменко С.,*** *Генеральный штаб в годы войны, М., с. 54.*

Սախարովի գլխավորությամբ, որպես հակամարտության կարգավորման մոդել նույնպես առաջարկել են հայերի և ադրբեջանցիների տարածքների «վերամիավորման» տարբերակը: Սակայն այն ժամանակ այս տարբերակը քննարկման առարկա չի դարձել[1]: Թե ինչպիսի հանգամանքներում է իրավապաշտպանների մոտ ձևավորվել նշված գաղափարը առայժմ հայտնի չէ: Սակայն հայտնի է, որ այդ մասին քաջատեղյակ էին Թուրքիայում: Այսպես 2002թ. լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ալիևն ասել էր. «Երբ Սախարովը եկավ այստեղ, խոսակցություն եղավ Մեղրին Ադրբեջանին փոխանցելու, իսկ Լաչինից Հայաստանի համար միջանցք բացելու մասին, որպեսզի այդ հարցը լուծվի: Ադրբեջանը դրա հետ չհամաձայնեց: Այդ մասին ինձ Թուրքիայում ասել է հանգուցյալ Օզալը, հետագայում Դեմիրելը: Չեմ կարող ասել, որ ի վերջո հայերը կհամաձայնեին, բայց ամեն դեպքում նման տրամադրություններ կային: Սակայն ադրբեջանական կողմը լիովին դեմ եղավ»[2]:

Թուրքիայում հայտնի քաղաքական մեկնաբան, նախագահ Օզալի խորհրդական Զենգիզ Չանդարը հիշում է. «1991թ. Օզալն ինձ ուղարկեց Բաքու մի առաջարկությամբ, որով փորձում էր Ղարաբաղի հարցում ճշտել Մութալիբովի ճկունությունը: Ըստ այդ առաջարկության՝ Ադրբեջանը Հայաստանին զիջում է Լաչինը և Ղարաբաղի մի մասը, իսկ Ղարաբաղի մյուս մասը Շուշիով, ինչպես նաև Մեղրին տրվում է Ադրբեջանին: Մութալիբովն ասաց, որ չի կարող ընդունել այդ առաջարկությունը: Ես մտածեցի, թե նա հաշվի է առնում Իրանի գործոնը: Մութալիբովի բացատրությունն այլ էր: Նա ասաց, որ Զանգեզուրը եղել է ադրբեջանական հող, և Ստալինն է տվել Հայաստանին: Ինչու մենք պետք է ադրբեջանական Լաչինը փոխանակենք ադրբեջանական Զանգեզուրի հետ»[3]:

Հետխորհրդային տարիներին, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում այս խնդիրը նորից վերադարձավ ռազմավարական քննարկումների հարթություն: Տեղեկություններ կան, որ այս գաղափարը քննարկման առարկա է դարձել նաև Թուրքիայի և ԱՄՆ նախագահների միջև, որի ընթացքում Թ. Օզալը Ջ. Բուշին ներկայացրել է ԼՂԻՄ-ը Մեղրիի հետ փոխանակելու հարցը՝ այն հիմնավորելով ԱՄՆ տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական շահերի համապատասխանության դիտանկյունից[4]:

Արդեն 1992թ. մայիսի 28-ին թուրք-նախիջևանյան սահմանում՝ Արաքսի ձախ ափին, Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հավաքված

---

[1] *Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность; предисл. и комент. В. Н. Казимирова. - 2-е изд., испр. и доп., М., 2004. с. 52.*

[2] *Зеркало, 24 июля 2002г., Баку.*

[3] *Մեջբերումն ըստ **Թ. Հակոբյանի**՝ Կանաչ ու սև, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 302:*

[4] ***Սարգսյան Ա.** Ո՞ւմ ծրագիրն էր իրականացնում Ռ. Քոչարյանը, https://www.ilur.am/news/view/67492.html*

հազարավոր ադրբեջանցիներին դիմում, բացականչում էր. «Սիրելի ադրբեջանցի թուրքեր, սիրելի նախիջևանցի թուրքեր: Մենք այստեղ ենք՝ ձեզ ասելու, որ դուք միայնակ չեք: Արազի վրայով այսօր մենք բացում ենք հույսի կամուրջը, որը Էգեյան ծովից մինչեւ Չինաստան ճանապարհ բացելու առաջին քայլն է»[1]: Հետևաբար, քանի դեռ Թուրքիայի և Ադրբեջանի, Թուրքիայի և թուրքական աշխարհի հետ կապի հարցը լուծված չէ, ապա պետք է համոզված լինել, որ այն դուրս չի գալու Թուրքիայի արտաքին քաղաքականության ռազմավարական ծրագրերից, որի իրականացման համար կօգտագործվի ամեն մի առիթ: Խնդիրն ավելի վտանգավոր է դառնում Թուրքիայի Եվրամիությանն անդամակցության ձախողման կամ այն այլևս գերխնդիր չդիտարկելու և նրա Արևմուտք-ՆԱՏՕ-ից հեռանալու, իսկ մյուս կողմից՝ ռուս-թուրքական մերձեցման աշխարհաքաղաքական զարգացումների հեռանկարի համատեքստում[2]:

1992թ. վերոնշյալ գաղափարը որպես տարածքների փոխանակման տարբերակ առաջ քաշվեց այսպես կոչված «Գոբլի ծրագրի» տեսքով[3]՝ պայմանավորված Ամերիկյան քաղաքագետ Պոլ Գոբլի անվամբ: Վերջինս գտնում էր, որ ԱՄՆ-ի համար անհրաժեշտ է մշակել նոր տեսակետ կապված տարածքային ամբողջականության հետ՝ ելնելով տնտեսական և էթնիկական գործոններից: Ըստ նրա «ՆԱՏՕ-ի հանուն սահմանների անձեռնմխելիության պաշտպանության ուժային կառույցներն օգտագործելու քաղաքականությունը «մեռած» և բոլորովին փակուղային սկզբունք է հանդիսանում»[4]: Լինելով պետական սահմանների փոփոխությամբ հակամարտությունները լուծելու համոզված կողմնակիցը՝ նա առաջ է քաշել մի ծրագիր, որով էլ հանրահայտ է դարձել տարածաշրջանում: Պոլ Գոբլը գտնում էր, որ Հայաստանը և Ադրբեջանը ի վիճակի չեն իրենք լուծելու խնդիրը: Եվ «բացարձակապես ոչ մի որոշում հնարավոր չէ, եթե կողմերը փորձում են վերադառնալ հին ստատուս - քվոյին, իրավիճակ, որը գոյություն ուներ նախքան պատերազմը սկսելը՝ 1988 թվականին»[5]: Ըստ նրա՝ նախկին ստատուս-քվոն պահպանվում էր

---

[1] ***Tomas Goltz,*** *"Azerbaijan Diary", page 212-213, M. E. Sharpe, Armonk.New York,London,England*

[2] *Ըստ Զ. Բժեզինսկու՝ Թուրքիան ձգում է երեք ուղղություններով. մոդեռնիստները ցանկանում են նրան տեսնել եվրոպական պետություն, և հետևապես նայում են դեպի Արևմուտք, իսլամիստները հակված են դեպի Մերձավոր Արևելք և մահմեդական համագործակցություն և այսպիսով նայում են դեպի հարավ: Դեպի պատմությունը նայող ազգայնականները տարածաշրջանում տեսնում են Կասպից ծովի ավազանի և Միջին Ասիայի թյուրքական ժողովուրդների նոր դերակատարությունը և այդպիսով նայում են դեպի Արևելք: Տես՝* ***Бжезинский З.,*** *Великая шахматная доска. Господство Америки и его геопалитические императивы. Пер. с англ. М., 1999, ст. 161.*

[3] *Այս մասին մանրամասն տե՛ս* ***Չաքրյան Հ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998:*

[4] ***Мурадян И.,*** *Противоречения политики отлантизма и проблемы регеональной безопасности, Ер. 2001, ст. 117.*

[5] ***Оганесян Н.,*** *Карабахский конфликт, этапы подходы, варианты решения, Ер. 1997, ст. 55*

շնորհիվ ԽՍՀՄ-ի, որն այլևս գոյություն չունի: Իրավիճակը հիմա փոխվել է և այն թելադրում է նոր մոտեցումների անհրաժեշտություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ: «Սկզբունքորեն կա երեք միջոց որոշելու Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ դուրս քշել կամ էլ սպանել բոլոր հայերին, որոնք հիմա գտնվում են այնտեղ, մտցնել մեծաքանակ արտասահմանյան զորք կողմերին բաժանելու համար, կամ էլ ԼՂԻՄ-ը դնել հայկական վերահսկողության տակ»[1]: Սակայն ինքն էլ գտնում է, որ հնարավոր չէ դրանց իրագործումը՝ առաջինը՝ հոգեբանական տեսանկյունից, երկրորդը՝ ֆիզիկական, երրորդը՝ քաղաքական, քանի որ այս դեպքում Ադրբեջանը կդառնա «կորսյալ» կողմ: Դրա համար էլ նա գտնում է, որ խնդրի լուծումը կարելի է գտնել տարածքների փոխանակմամբ: Ծրագրով նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղի մի մասը միացնել Հայաստանին իսկ մյուս մասը հանձնել Ադրբեջանին: Ինչ վերաբերում է Մեղրիին, ապա այն որպես կամուրջ Նախիջևանի ու Ադրբեջանի միջև վերջինիս էր կցվում: Այս ծրագրով փաստորեն Հայաստանը կկտրվեր Իրանի հետ ընդհանուր սահմանից և կմնար լիակատար շրջափակման մեջ: Բացի տարածաշրջանային նշանակությունից ծրագիրը նաև աշխարհաքաղաքական բաղադրիչ ուներ՝ Իրանի ու Ռուսաստանի շահերով պայմանավորված:

Թե որքանով է «Գոբլի ծրագիրը» կապված Թ. Օզալի և Ջ. Բուշի արդեն վերը հիշատակված քննարկման հետ, դժվար է ասել:

Սակայն Պոլ Գոբլը նույնպես հասկացավ իր ծրագրի անիրականանալիությունը, որի համար էլ ավելի ուշ առաջ է քաշել նոր՝ նախկինի կատարելագործված տարբերակը. «Սխալն այն է, որ նա չէր հասկացել, թե ինչպիսի հոգեբանական նշանակություն ունի Հայաստանի համար Իրանի հետ ընդհանուր սահմանը: Դրա համար էլ այժմ նա առաջարկում է Մեղրու միջանցքը տալ Ադրբեջանին, իսկ Նախիջևանի մերձարաքսյան շրջանը՝ Հայաստանին, որպեսզի ապահովվի Իրանի հետ սահմանը»[2]: Պոլ Գոբլի ծրագիրը չիրականացավ, բայց այն հետաքրքիր է նրանով, որ ճանաչվում է նախկին ստատուս քվոյի վերականգնման անիրական լինելը, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղն այլևս հնարավոր չէ մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: Դրանց հետաքրքրությունն այն է նրանում, որ ըստ էության առաջարկվում է հրաժարվել նախկին քարացած սկզբունքներից և մշակել նոր մոտեցումներ: Պոլ Գոբլի ծրագրի մասին խոսակցությունները կրկին ակտիվացան 2001թ.՝ Քիվեսության բանակցությունների օրերին, որը քննարկման առանձին թեմա է: Բայց նույնիսկ այդ օրերին կարծիքներ էին հնչում, և ոչ անհիմն, թե դրանց

---

[1] ***Оганесян Н.,*** *указ.соч,. Ереван, 1997, ст. 55*

[2] ***Мурадян И.,*** *Политика США и проблемы безопасности региона Южного Ковказа. Ереван, 2000, ст. 29.*

հիմքում ընկած էր հենց Գոբլի ծրագիրը, որի ծագման շարժառիթները ևս լիովին բացահայտված չեն:

Այսպիսով՝ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման համատեքստում ուսումնասիրելով տարածքների փոխանակման գաղափարի ծագման ու ծավալման շարժընթացը՝ ակնհայտ է դառնում, որ բոլոր դեպքերում այս կամ առավել հայտնի «Մեղրու միջանցքի» փոխանակման գաղափարը իր ծագումնաբանությամբ թուրքական ռազմավարական ծրագիր է: Դրա նպատակը Ադրբեջանի և դրանով իսկ միջինասիական թուրքալեզու երկրների հետ անմիջական ցամաքային կապի ստեղծումն է՝ թուրքական հեռահար ծավալապաշտական ծրագրերի իրականացման համատեքստում: ԽՍՀՄ տրոհումից հետո Թուրքիայի համար կրկին արդիական դարձան վաղեմի պանթյուրքական ծրագրերը իրականացնելու, այդ թվում՝ Ադրբեջանի տարածքով միջինասիական թյուրքալեզու պետությունների հետ անմիջական ցամաքային կապի ստեղծման հեռանկարները: Հենց թուրքական ծավալապաշտական ծրագրերի համատեքստում պետք է դիտարկել հայ-թուրքական հարաբերությունները ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորելը, Ադրբեջանի հանրապետությանը ամեն ձևով աջակցությունը, Հայաստանը շրջափակելու և հայ ժողովրդի դեմ ուղղված այլ թշնամական քայլերը: Հետևաբար, հակամարտության կարգավորման բանակցություններում հարկ է մշտապես հաշվի առնել այս հանգամանքը և քայլեր ձեռնարկել այդօրինակ գաղափարների իրականացումը ի սպառ բացառելու համար: Մերձավոր Արևելքում, մասնավորապես Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները հերթական անգամ փաստում են, որ Թուրքիան որևէ առիթ բաց չի թողնում նոր տարածքներ նվաճելու և պանթյուրքական գաղափարները իրագործելու համար: Իսկ փոքր եղբայրը, ի դեմս Հ. Ալիևի, առիթը բաց չի թողնում մեծ եղբորը ձայնակցելու, հայատյացություն քարոզելու իսկ հնարավորության դեպքում ցեղասպանության թուրքական ծրագրերը վերջնահանգրվանին հասցնելու համար[1]:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը:

---

[1] *Թյուրքական խորհրդի 2019թ. վերջերին կայացած 7-րդ գագաթնաժողովին Ի. Ալիևը, հերթական անգամ հակահայկական կեցվածք ընդունելով և թյուրքական աշխարհին Հասաստանի դեմ տրամադրելու համար, հայտարարել է որ. «Զանգեզուրի փոխանցումը Հայաստանին հանգեցրեց թյուրքական աշխարհի աշխարհագրական պառակտմանը»: Ильхам Алиев заговорил о передаче Зангезура Армении, https://haqqin.az/news/160538*